# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1928 – *Մայիս* – 1928


*Էջ*

Հ. Ե. ՓԷՅՃԵԱՆ. — *Ամէն-էմ-ոփէի «Իմաստութիւն»ը և «Առակք» Սողոմոնի* . 129

Ս. ՏԷՐ Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ. — *Արտաքին անդրադարձութիւնք հին Հայաստանի մասին*. 136

Հ. Գ. ՍԱՐԳՍԵԱՆ. — *Սրահանգ բառին ստուգաբանութիւնը* . . . . 142

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ. — *Կարմիր հրաբուխն, կանաչ դաշտն Շիրակի և կապոյտն Արագած* . . . . . . 143

ԳՐԱԿԱՆ

ՄԱՐԻԱ ՍՏԵԼԼԱ. — *Առաջին վարդապետը. – Մեքենական քաղաքը. – Աստղերը. – Ոչ, չէ տխուր* (*Թրգմ.* Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ) . . 149

Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ. — *Զատիկ. – Իմ պարտէզիս հիրիկին* . . . . 151

ԱՐՍԷՆ-ԵՐԿԱԹ. — *Աշնային* . . . 152

ԳԻՏԱԿԱՆ

Հ. Խ. ՍԻՆԱՆԵԱՆ. — *Ինչո՞ւ աստղերը բացխփիկ կը խաղան* . . . . 152

ԱՅԼԵՒԱՅԼՔ

ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ. — *Դեւատունը*. 156

ՏՔԹ. ԵՂԻԱ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ. — *Յովակիմ Կէօրէօկ* . . . . . . 159


# SOMMAIRE

1928 - Mai - 1928


p.

*P. E. Paitchighian.* — La «Sapience» de Amen-em-opé et les «Proverbes» de Salomon . . . . . . . . 129

*S. Der M. Krikorian.* — Allégations des étrangers de l'ancienne Arménie . 136

*P. G. Sarkissian.* — L'étymologie du mot «Srahank» . . . . . . 142

TOPOGRAPHIE

*P. G. Nahabedian.* — La plaine de Shiragh et l'ardent volcan du mont A-rakatz . . . . . . . . 143

LITTÉRATURE

*Maria Stella.* — Il primo maestro. - La città meccanica. - Le stelle. - No, non è triste (trad. en vers arm. *P. A. Ghazighian*). 149

*P. V. Hovhannessian.* — Pâques. - A l'iris de mon jardin . . . . . 151

*Arsen-Yergath.* — Automne . . 152

SCIENCE

*P. K. Sinanian.* — La scintillation des étoiles . . . . . . . 152

DIVERS

*Karékin Ev. Khatchadourian.* — La maison des démons. . . . . . 156

*Doct. Elie Hovhannessian.* — Joachim Gheureugh . . . . . . . . 159



## ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

**ԿԱՐԵՒՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ**

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

ԳՐԵՑ

Հ. ՎԱՐԴԱՆ Վ. ՀԱՑՈՒՆԻ

(*Գին՝ ֆր.* 15.—)

**ՀԱՅ ԿԱՅՍԵՐՔ**

ԲԻՒԶԱՆԴԻՈՆԻ

Ա. ՀԱՏՈՐ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(*Գին՝ ֆր.* 10.—)



*Դիմել՝*

Imprimerie Arménienne

St. Lazare VENISE (Italie)



digitised by A.R.A.R.@

# ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Վենետիկ այս տարի տօնեց ապրիլի մէջ, Ս. Մարկոսի նշխարներուն Աղեքսանդրիայէն Վենետիկ փոխադրութեան տասնըմէկերորդ հարիւրամեակը, եկեղեցական փառաւոր հանդէսներ կազմակերպելով։ Հանդէսներուն աւելի փայլ ու պերճութիւն ընծայելու համար, քաղաքիս Վսեմ. Ծիր. Պատրիարքը, հայասէր Լաֆոնդէն փափագեցաւ որ կատարուի միանգամայն հայ արարողութեամբ ձօնուած պատարագ մը Ս. Մարկոս եկեղեցիին մէջ և հրաւիրեց Ամեն. Հոգեւոր Տէր, Պետրոս Պօղոս Թերզեան Կաթողիկոսը պատարագելու։ Սահմանուած օրը ապրիլ 22ն էր՝ կիրակի. եկեղեցին շռայլօրէն պաճուճուած էր և բազմաթիւ խուղէ կանթեղներու կարմիր և ճերմակ լոյսի պլպլացումները անհամար բիբեր կը թուէին ոսկեձեղուն գմբեթներու ներքեւ յածող մթութեանց մէջ. բազմութիւն մը խռնուած էր տաճարին մէջ հայկական պատարագ տեսնելու, որ հմայիչ դիւթանք մ'ունի օտարին համար իր հանդերձաւորումի շքեղութեամբ, իր երգի մեղեդիներով. երգիչներու դասը եռաձայն նուագեց պատարագի գլխաւոր խմբերգները, երգեհոնի ընկերակցութեամբ. մեղեդիներու խազերը զօրաւոր բայց մռայլ և տխրամած, առանց բարձրանալ կարենալու գմբեթներէն վեր, կ'իջնէին սրտերուն մէջ յուզելու և ճնշելու։

Զորեքշաբթի, Ս. Մարկոսի տօնին՝ հանդէսներու յետին օրը, կատարուեցաւ իբր փակում տօներուն, մեծաշուք թափօր մը եկեղեցիէն դուրս երեկոյեան ժամը հինգուկէսին. անթիւ բազմութիւն մը զանազան ընկերութիւններու, կղերականներու, կանոնիկոսներու և եպիսկոպոսներու մասնակցեցան թափօրին, նոյնպէս նաև Մուրատ-Ռափայէլեան վարժարանն իր շեփորախումբով, Մայրավանացս կղերիկոսներն եկեղեցական զգեստներով և Ամեն. Թերզեան կաթողիկոսը։ Այդ պատմական թափօրով վերջացան հանդէսները։

# ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

*N. Alontz.* — Le Questiónnaire de St. Gregoire Illuminateur et ses rapports avec Eznik (Extrait de la Revue de «l'Orient Chrétien») Paris, Librairie Auguste Picard, 1927.

— Tarkou chez les anciens arméniens (Extrait de la « Revue des Etudes Armeniennes»). Paris. Librairie Orientaliste Paul Geuthner, 1927

— Sur l'origine de Léon V. empereur de Byzance. (Extrait de « Armeniaca ». Leipzig im Verlag der Asia Minor 1927.

*Դր. Ե. Ֆրանգեան.* — Հայ հասարակական միտքը. Խ. Աբովեան, Ս. Նազարեան, Մ. Նալբանդեան, Ռ. Պատկանեան, Խրիմեան Հայրիկ. Գահիրէ, տպարան «Յուսաբեր»ի 1928, Գին. 1 տոլար։

*Մեսրոպ Նուպարեան.* — Գրպանի Բառարան. Ա. Ֆրանսերէնէ-Հայերէն. Փարիզ, Գրատուն Պ. Պալենց 1928. Գին կազմով՝ Ֆր. 25։

*Յ. Թ. Հինդլեան.* — Զոյգ մը հոգի. Բեսդալոցցի, Պեթհովըն. Հրատարակութիւն և տպագրութիւն «Հայ դպրոց»ի Պընէէն և Ժընև. 1928։

*Էտուառ Քիւրանեա.* — Զափու վրայ դպրոց (թրգմ. Պ. Գէորգեան). Հրատարակութիւն և տպագրութիւն «Հայ դպրոց»ի. Պընէէն և Ժընև. 1928։

*Յակոբ Մանանդեան.* — Գրի ծագումը և տարածումը. (Դասախօսուած Սոֆիայի «Հայ Օրիորդաց Միութեան»). Սոֆիա, տպագրութիւն Պ. Պալըգճեան, 1928, Գին՝ 8 լեւա։

*Հայկական բարեգործական ընդհանուր Միութիւն, Անձեռնմխելիութիւն և Թրրսթ.* Բարիզ, Գեղարուեստական հայ տպարան, 1928։

*Կ. Սասունի.* — Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914-1918). Տաճկահայ գաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի Հանրապետութեան կազմութեան մէջ. Բոստոն, 1927, Գին՝ 1 տոլար։

digitised by A.R.A.R.@

# ԿՈՉ

## «ՀԱՅ ԳԻՐ»Ի ԱՇԽԱՏԱՒՈՐԻ ՄԸ

## «ՀԱՅ ԳԻՐ»Ի ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐՈՒՆ

Ձեռնարկած ըլլալով պատրաստելու «Հայկական Նոր Մատենագիտութիւն եւ Հանրագիտարան Հայ կեանքի» աշխատութիւնս, որուն առաջին հատորը (Ա.-Մ) ամբողջացաւ 1911ին, եւ վերջերս Ց եւ Ն գրերն ալ հրատարակուեցան, անոնք եւս հին ապրանք ըլլալով, կը դիմեմ՝ բոլոր հրատարակիչներուն, հեղինակներուն, խնդրելով որ հաճին իրենց հրատարակած կամ հեղինակած գրքերէն մէյմէկ օրինակ ղրկել. գրագէտներուն՝ որ իրենց գրական կեանքը՝ համառօտիւ՝ խմբագրութիւն, թղթակցութիւն այս կամ այն թերթի, իրենց ծածկանունները, եւն, եւն, հաղորդել։ Գործս՝ շարունակութիւնը պիտի չըլլայ հրատարակուածին. ան՝ մինչեւ 1905 տարին կը հասնէր, անկէ ի վեր 23 տարի անցած է եւ ահագին բան տպուած, եւ արդէն սակաւաթիւ օրինակներ կը մնան։ Ուստի պիտի ըլլայ միաձոյլ ամբողջութիւն մը, բարեփոխուած ծրագրով, գեղչումներով եւ յաւելումներով Այբէն՝ Ֆէ, 1512–1930։ Հայկական Հարցի, Հայկական Մարտիրոսագրութեան առանձին գլուխներ բացած ըլլալով, կը խնդրեմ՝ նոյնպէս որ այդ նիւթերուն, նոյնպէս հայկական կեանքի վերաբերեալ ինչ գրութիւն որ ունին հայերէն թէ եւրոպական ուրիշ լեզուներով, հաճին ղրկել։ — Ինչ որ առնեմ՝ պիտի ծանուցուի մեր «Բազմավէպ»ին մէջ շնորհակալութեամբ։

Հ. ԱՐՍԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ

Կը խնդրուի Հայ թերթերէն հրատարակել այս ԿՈՉը։

digitised by A.R.A.R.@